EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

Գանգատ թիվ 66265/17

Հրանտ ՄԱԶՄԱՆՅԱՆՆ ընդդեմ Հայաստանի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք), 2022 թվականի ապրիլի 7-ին հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Յոլիեն Շուկինգ [Jolien Schukking]՝ *Նախագահ,*

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Անա Մարիա Գուերա Մարտինս [Ana Maria Guerra Martins]՝ *դատավորներ,*

եւ Վիկտորիա Մարադուդինա [Viktoriya Maradudina]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալի պաշտոնակատար*,

հաշվի առնելով 2017 թվականի օգոստոսի 23-ին ներկայացված վերոնշյալ գանգատը,

անցկացնելով խորհրդակցություն, կայացրեց հետեւյալ որոշումը.

ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Դիմումատու պրն Հրանտ Մազմանյանը ծնվել է 1970 թվականին: Նրան թույլատրվել է Դատարանում վարույթի ընթացքում ներկայացնել իր շահերը:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ դիմումատուի՝ վկային իր անունից հարցաքննելու անհնարինության վերաբերյալ ներկայացված բողոքն ուղարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարություն (Կառավարություն), որը ներկայացրել է բողոքի ընդունելիության եւ այն ըստ էության քննելու վերաբերյալ իր դիտարկումները: Դիտարկումներն ուղարկվել են դիմումատուին, որին առաջարկել են ներկայացնել սեփական դիտարկումները: Ի պատասխան՝ 2021 թվականի հունիսի 18-ի իր գրությամբ դիմումատուն պարզապես ներկայացրել է արդարացի փոխհատուցման իր պահանջները:

2021 թվականի սեպտեմբերի 28-ի գրությամբ, պատվիրված նամակ ուղարկելու միջոցով դիմումատուն ծանուցվել է այն մասին, որ իր դիտարկումները ներկայացնելու համար թույլատրված ժամկետը լրացել է 2021 թվականի մայիսի 25-ին, եւ որ ժամկետը երկարաձգելու վերաբերյալ միջնորդություն չի ներկայացվել: Դիմումատուի ուշադրությունը հրավիրվել է Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետին, որով նախատեսվում է, որ Դատարանը կարող է գանգատը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այն եզրակացության, որ դիմումատուն մտադիր չէ հետամուտ լինել իր գանգատին: Այնուամենայնիվ, որեւէ պատասխան չի ստացվել:

Քարտուղարի՝ 2021 թվականի սեպտեմբերի 28-ի գրությունը 2022 թվականի մարտի 2-ին վերադարձվել է Դատարան որպես չպահանջված փոստային առաքանի, մինչդեռ Դատարանը հասցեն փոխելու վերաբերյալ դիմումատուից նախապես որեւէ գրություն չի ստացել:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

Վերոնշյալի լույսի ներքո, ինչպես նաեւ Կոնվենցիայով եւ դրան կից արձանագրություններով երաշխավորված իրավունքի նկատմամբ հարգանքի մասով որեւէ հատուկ հանգամանքի բացակայության պարագայում Դատարանը,

Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն, համարում է, որ գանգատի քննությունը շարունակելն այլեւս արդարացված չէ:

Հետեւաբար գործը պետք է հանվի ցուցակից:

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

Որոշում է գանգատը հանել գործերի ցուցակից:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2022 թվականի մայիսի 5-ին:

Վիկտորիա Մարադուդինա՝	Յոլիեն Շուկինգ՝
Քարտուղարի տեղակալի պաշտոնակատար	Նախագահ